

ՀԱՅՆԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՐԿԸ

Մադրասում, 1783 թ., լույս տեսավ անգլերենից թարգմանված առաջին երկը, որը նվիրված էր Նազիր շահի կյանքին ու գործունեությանը՝ «Պատմա-պրոթին վարուցն և գործոց Նազիր շահ թագաւորին պարսից» վերնագրով: Գրքի հեղինակն է Հանուէ Անգլիացին¹, որ գրել է անմիջական տպավորություն-ներն ստակ: Թարգմանությունը, որ հայագիտական երկերում պարզապես հիշա-տակության է արժանացել միայն, նշանակալի է ոչ միայն անգլերենից կատար-ված լինելու անգրանկության առումով, այլև գաղափարական այն խիստ ինք-նատիպությամբ, որով ճանաչողական մեծ արժեք է ձեռք բերում:

Թարգմանական այդ երկը լույս է տեսնում ժամանակի հնգկահայ հասա-րակական ու քաղաքական շահագրգռությունների վրա և բացահայտում է այն հեռահար նպատակները, որ հետամտել են թարգմանության հետ առնչվողները: Այդ թարգմանությունն էլ իր հերթին գալիս էր արձագանքելու ժամանակի հրնդ-կահայ առաջավոր մտածողների ազգային ազատագրության, Հայաստանի ան-կախությունը ձեռք բերելու և նրա վարչա-տնտեսական կառուցվածքը նախո-րոշելու խոհերին:

Հանուէյի երկի թարգմանության լույս ընծայումից մեկ տասնամյակ առաջ, հայ հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացող հրապարակն էին իջել հայ ազատագրական շարժման նոր գաղափարախոսները՝ իրենց ծրագրային երկերով (Մ. Բաղրամյան, «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ», 1772 թ., Շ. Շա-համիրյան, «Գիրք անուանեալ որոգայթ փառաց», 1773 թ.): Այդ աշխատու-թյունների գաղափարները հետաքրքիր յուրահատկությամբ բեկվում են թարգ-մանական այդ երկում, որը նույնպես լույս էր տեսնում Շահամիրյանի տպա-րանում:

«Պատմագրությունը...» ուշագրավ է իր իրարամերժ գաղափարներով, ո-րոնք արտացոլվել են մի կողմից ամբողջ թարգմանության մեջ ու թարգմանչի հակիրճ խոսքում, մյուս կողմից՝ վերջաբանում («Վերջաբանութիւն գրքոյս առ պատուական ընթերցողքս»), որտեղ ըստ էության հակադիր հայացքներ են ար-ծարծվում: Թարգմանությունը հետաքրքիր է նաև գեղարվեստականության ա-ռումով:

Գրքի թարգմանիչ Պողոս Միրզայանը բաժանում է Նազիր շահի վերաբեր-յալ հեղինակի կարծիքը, ըստ որի Նազիր շահը դիտվում է որպես արևելյան տիպիկ լուսավաղ, որ խժոժություններով ու դաժանությամբ սարսափ ու ալեր է տարածել ամենուրեք, իր բաղմամբով արշավանքների ճանապարհին: Ընդհանուր է,

¹ Հանուէյի մասին հաղորդում է Էմին իր «Հայոց գրականությունը 18-րդ դարում» հոդվածում («Մուրճ», 1901, N 11, էջ 183): Ավելի մանրամասն տեղեկություններ է տալիս Հովսեփ Էմինի մեմուարային աշխատությունը («The life and adventures of Joseph Emin», Calcutta 1918, p. 162).

սկզբում նրանով ոգևորվողներ լինում են, երբ հաղթական կոիվներ էր մղում երկրի մեծ մասը նվաճած աղվանների դեմ, բայց երբ բռնատիրական կամայականությունն ու դաժանությունը դառնում են նրա պետական քաղաքականությունը, դժգոհ տարրերը սպանում են նրան հարեմում, 1747 թ.:

Կարևոր է նշել Նադիր շահի սպանության նկարագրությունը հաջորդող հեղինակային տողերը, որոնց մեջ միաժամանակ համադրվում է արևելյան այդ բռնակալի գործունեության նկատմամբ հայեցակետը:

«Եւ այսպէս անկաւ մտրակն արեւելյան: Եւ խարհին... թողլով զինի զյիշատակ դառնութեան, յիտ վարելոյ զազգն համայն յատակս թշուառութեան, զօրինակ տալով մեզ, զի թագաւորն այն, որ փոխէ զգովն և զարդարութիւն (որք են զարդ և պայծառութիւն ավոռոյ տէրութեան իւրոյ) ընդ վշտաց և անողորմութեանց, պարտէ նմա դիտել, թէ նախասահմանօղն աստուած սանձահարեացէ զնա յաւուր միում և խափանեացէ զգործս անօրէնութեանց նորա...»²:

Հանունը լուսավորականության դիրքերից, որ XVIII դարի մտավոր շարժման գլխավոր բովանդակությունն է կազմում, բաղմակողմանիորեն բացահայտում է բռնատիրության էությունը Նադիր շահի միջոցով և հակված է դեպի սահմանադրական կարգերի ջատագովումը, զեպի լուսավորչալ միապետը, որը շատ լուսավորիչների քաղաքական իդեալն էր հանդիսանում: Դաժան, ոչ-լուսավորչալ միապետը միայն աղետներ ու թշվառություն կարող է բերել իր ժողովրդին, մինչդեռ նրա կոչումն է այդ հանրության ծառայելը: Դրան հակառակ, Նադիրը մեծագույն ազահ է և համշտակելու մոլուցքով լի, որի պատճառով իր հայրենի և նվաճված երկրների ժողովուրդները հասել են ծայրահեղ աղքատության: Եւ հենց Նադիրի քաղաքականությունն է, հավաստիացվում է թարգմանության մեջ, որովհետև «ի գէպ է մեզ կարծել, զի խորհէր նա, թէ ոչ այլ ինչ առաւել պատասպարան լինիլ կարէր յափշտակութեան իւրում, քան զաղքատութիւնն ժողովրդեանն, զոր իբրև միայնակ հնար և ճար համարէր խափանելոյ զապստամբումն նոցա»³:

Լուսավորական դիրքորոշումը պարզորոշ երևում է այն համեմատության մեջ, որ անցկացվում է Ալեքսանդր Մակեդոնացու և Նադիրի միջև: Ըստ Հանույի երկուսն էլ իշխանասերներ են, երկուսն էլ վայելել են իրենց զորքերի հոժարակամությունը, բայց նրանց միջև կա նաև խոշոր տարբերություն: «Ալեքսանդր էր չոժ սիրելի, իսկ Նատիրն զարհուրելի, մինն ներդրածեաց զսէր ր յազգս մարդկան, իսկ միւսն այնքան շար եղև, մինչ զի հազիւ ուրեմն կարիցէ որ, թէ գործ իւր էր մարդկային նախադասութեամբ. և երկուքին սոքա եղեն առարկայ զարհուրման և սքանչացման, բայց յորժամ զսիրալիր գովաբանութիւն նուիրեմք ի յիշատակ Աղեքսանդրի, գործք Նատիրին ի յատելութիւն շարժէ զմեզ, մինն էր ի բնէ առատաձեռն և կրթեալ ազատական գիտութեամբ, իսկ միւսն, (թէ և բնական մասամբ գերագոյն) էր նենկաւոր, խաբերայ և անուսումն»⁴:

Սակայն նույնիսկ մեծագործ Ալեքսանդրն էլ ի վերջո չի ազատվում հեղինակային հարձակումներից, որովհետև նա ղեկավարվել է հաղթությունների

² Հ ա ն ո թ է Ա Ն Ղ ի ա ղ ի, Պատմագրութիւն վարուցն և գործոց Նադիր շահ թագաւորին պարսից, Մաղրաս, 1780 (1783), էջ 171:

³ Նույն տեղում, էջ 178:

⁴ Նույն տեղում, էջ 96:

սնափառությամբ, անձնական և ոչ թե համաժողովրդական մղումներով: Նա ևս, Նադիրի նման, միայն շարիք է ծնել մարդկության համար, և դա՛ է նրանց պատմական արգասիքը:

Նադիր շահի միջոցով կերտվել է բնատիրության տիպիկ դիմանկարը, որ թարգմանիչ Միրզայանի համար կենդանագրականի հարադատություն ունի: Այդ երևում է ոչ միայն նյութի ընտրությունից, այլև ուղղակի թարգմանչական խոսքից, որ հաջորդում է բնագրայինին: Այդտեղ Միրզայանը հաղորդում է, որ ինքը թարգմանել է Նադիրի կյանքի վերաբերյալ ավելի ընդարձակ երկասիրության մի մասը, որը հնարավորության սահմաններում կամբողջացնի, իսկ հակառակ դեպքում պետք է գոհանալ այդքանով: «Զի ալզ մեր,— բացատրում է Միրզայանը,— քաջ գիտեն դենութին, ղբարս և ղայլ ղարհուրելի և ղանողորմ գործս բռնաւորին այնոսիկ, չէ փոյթ նոցա ծանիցեն ղայնոսիկ գրով»⁵:

Թարգմանիչ Միրզայանին քաջ հայտնի է Նադիր շահի կողմից հայ ժողովրդին հասցված տառապանքների պատմությունը, ուստի գիտե, որ իր թարգմանած երկի ընթերցողները պակասը կլրացնեն իրենց անմիջական կամ հուշապատմում դարձած տպավորություններով, որոնք անպայման բացասաբար էին խոսելու Նադիրի մասին: Նրա վստահությունը ղալիս էր, անշուշտ, իր առաջին ուսումնավայր Նոր Զուղայից, որտեղ Նադիր շահի հասցրած վերքի կսկիծը աղեկատու երգի էր փոխվել:

Թիւն ՃէԱ շուն Նադր
Սարվանն վեր վառեց կրակն,
Ոչ միայն երկրումս մարդ չեթող
Այլ թամամ աշխարհս էրետ մին-մին մահակն:

Մահակ էրետ ողջին մին-մին լուծեց լուծ,
Էլ ոչ ղրուց իմացաւ, ոչ ահւալ հարցուց,
Մեծ ու պստիկ ողջին խեղդեց քոռացուց,
Յետնումն գծումայ մին-մին թալակն⁶:

Պողոս Միրզայանը չէր սահմանափակվում, անշուշտ, սոսկ անաշուղական կամ բարոյախոսական դիդակտիկ խնդիրներով, որոնք տիրապետող կրոնաբարոյախոսական գրականության գլխավոր նպատակն էին: Մանավանդ, որ իր ընթերցողները քաջ գիտեին «ղանողորմ գործս բռնաւորին», կարիք կա՞ր կրկնություն:

Միրզայանը ավելի լայն նպատակադրում ունի, որ միտում է ձայնակցել «Որոգայթ փառաց»-ի հեղինակին ու նրա գաղափարական ղինակիցներին: 'Իւո Մ. Բաղրամյանը ուրվագծում էր Նադիրի ղեմքը որպես բռնակալի⁷, իսկ Շահամիրյանը, իր նպատակադրումից ելնելով, բացատրում էր միապետական իշխանությունը՝ այն համարելով միայն ու միայն շարիք ժողովրդի համար: Հայ տիրակալները անցյալում, գանում էր Շահամիրյանը, միայն ղրկում, կողոպտում ու լկում էին ժողովրդին, անասնականորեն էին անցկացնում իրենց կյանքը:

5 «Պատմագրություն...», էջ 179:

6 Հար. Տեղ. Հարությունյանց, Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան, Նոր Զուղա, 1880, հատ. առաջին, էջ 263: (Տե՛ս մանրամասնությունները զրքի էջ 248—279):

7 Մ. Բաղրամյան, Նոր տետրակ որ կոչի յորդորակ, Մաղրաթ, 1782, էջ 191:

Այդ կերպ նրանք ժողովրդին մատնեցին զերության, իսկ հայ աշխարհն էլ թողեցին այլադպիսներին ժառանգություն: Պատմությունից արվող այս եզրահանգումից հետո, Շահամիրյանը գիմում էր իր ընթերցողին՝ ցանկալի վարչակարգի հնարավոր ընտրության կապակցությամբ. «Արդ հարցանեմ քեզ, ընթերցող, ասա ինձ, բարեկամ, եթէ կամիս կրկին ընդունիլ այդպիսի սարսափելի տէրութիւնն, որում շահաւտութիւնն բարձրացաւ միմիայն ցարշապարն, այլ վնասն Եհսս մինչև ի գլուխ»⁸:

Ընթերցող, բայց տվյալ դեպքում թարգմանիչ Միրզայանի թարգմանած երկը բացասաբար էր պատասխանում այդպիսի ընտրությանը: Հենց նադիր շահի իրական ու շատ հայտնի անձնավորության միջոցով ցուցադրվում էր միաշեման բռնակալի՝ ժողովուրդների համար ստեղծած տառապալից կյանքը: Դրանով Միրզայանը արձագանքում էր ժամանակակից հուզող հարցին և հայ հասարակական մտքի այն թևի հայեցողությանը, որ միտում էր բուրժուական հանրապետական կարգեր ստեղծել ակնկալվող Հայաստանում⁹:

Սակայն հասարակական այս մտահայեցողության կողքին կար մի ուրիշը ևս, որ դափնեպսակ էր հյուսում հայ անցյալի շուրջ, մեծարում էր միայն աշխարհիկ ու հոգևոր տերերին և նոր Հայաստանի համար էլ նախատեսում էր միապետական կարգեր՝ եկեղեցու հետ սերտ դաշինքով ամրացած: Այդ հայեցողակտից էր պայիս այն, որ Սիմեոն կաթողիկոսի համար Մ. Բաղրամյանի «Յորդորակ»-ը, որ զեն ի ձեռին նահատակվելով ազատագրության հասնելու գաղափարն էր պաշտպանում, համարվում էր «Իիվաշունչ պղծությամբ կորստաբեր գիրք», որովհետև ըստ էության այդտեղ նսեմացվում էր եկեղեցու գիրքը նորանկախ երկրում:

Այդ երկրորդ մտահայեցողության կողմնակիցները մեծարանքի ոչ մի միջոց չէին խնայում անցյալ ու ներկա թագակիրների համար, նրանց օժտում էին պերնական հատկանիշներով, հարուստ անհատականությամբ և ժլատ չէին դրվատանքի արտահայտությունների մեջ¹⁰:

8 Շ. Շահամիրյան, Գիրք անուանեալ որոգայթ փառաց, Մաղրաս, 1773, էջ 26:

9 Թարգմանչի այս կողմնորոշումը զարմանալիորեն թյուր է մեկնաբանվել: Ակադ. Ա. Բ. Գաբրիելյանը նրա մասին ասում է. «Ինչպես հայտնի է, Արքայամ Կրետացին ժամանակին հանդես է եկել նադիր շահի պաշտպանի դերում: Դժվար է երևակայել, թե նեղկա՞յ առաջավոր դործիչներին հայտնի չէր արևելյան ղեկավարի այդ ներկայացուցչի իրական դերը: Անշուշտ, հայտնի էր: Սակայն չնայած դրան, և որքան էլ այդ զարմանալի է, նենց այդ դործիչները թարգմանում և 1780 թ. հրատարակում են անդիպացի Հանուեի մի գիրքը նադիր շահի մասին և արձագանքում Արքայամ Կրետացուն» («Ակնարկներ հայ պարսերական մամուլի պատմության», հատ. 1, Երևան, 1956, էջ 164):

Ամբողջ թարգմանությունը, ինչպես նաև թարգմանչի նախընթաց, բայց պերճախոս եզրափակումը նման նշանության հիմք չեն տալիս: Ընդհակառակը, թարգմանիչը իր կատարած աշխատանքով դադափարական ձևեր է մեկնում Մ. Բաղրամյանին ու Շ. Շահամիրյանին և անջատվում է իր իսկ գրքի վերջաբանի հեղինակներից, որոնք այլ գիրքորոշում ունեն:

Մի՞թե ցանկալի կամ թեկուզ դրվատելի կյիսներ մի միապետ, որի միայն մեկ արարքը՝ Շիրազի դրաման ու նրան հաջորդող ղեկերը (պատկերված թարգմանության 159-րդ էջում), բավական էր նրա մասին պաշտփար կազմելու համար:

10 Եթե Մ. Բաղրամյանը նադիր շահի մասին ասում է, որ նա «բռնակալյալ բազում կողմանս այլ աշխարհաց», եթե Պ. Միրզայանը նրա դործունեությունը բնութագրում է որպես «զարնուրեյի և դանդորմ գործս բռնալորի», ապա Արքայամ Կրետացի կաթողիկոսը նադիր շահի մեջ տեսնում է «մեծագոր և մեծախելը, նանճարեղ...» տիրակալի («Պատմութիւն անցիցն իւրոց և նատր-Շահին պարսից», Վաղարշապատ, 1870, էջ 45):

Այս հայեցակետը իր արտահայտությունն է գտել վերջարանի մեջ: Վերջա-
րանի հեղինակները, անկախ թարգմանությունից բխող տրամաբանական հե-
տևությունից, նադիր շահին զնահատում են բոլորովին այլ ասպեկտից, քան
այդ կա Միրզայանի մոտ: Նրանք նադիրին վերագրում են իր ժողովրդին փըր-
կած լինելու վեհ միսիան, վրեժխնդրության արդար զգացմունքն են տեսնում
նրա պատերազմական գործողությունների մեջ և, ամենաուշագրավը, նրան
հերոսի տիպար են համարում ազատության ձգտող ամեն մի ազգի համար:
Մենք մեջ ենք բերում այդ հաստիքը վերջարանից, որը խիստ բացորոշ ցույց է
տալիս շահամիրյանական թեկն հակադիր տենդենցը, քաղաքական դիրքորո-
շումը, որը դրսևորվում է նադիր շահի գործունեության լուսնագրման և նրա
անձնականությանը տրված մակդիրների միջոցով:

Վերջաբանի հեղինակները թարգմանության լույս ընծայման կարևորու-
թյունը պատճառաբանում են նրանով, որ «զի արժան է ոչ միայն ցուցանիցէ
դժաշտութիւնն և աջողութիւնն բախտին քաջ շահ՝ Նադիրին, այլև յայտնի առնէ
յազդին մերոց հայոց, զի ի ժամանակի մերում ծնեալ է ի յաշխարհն յարեւելեան
դպնսպիսի այր քաջ, հզօր, յաղթանդամ և ջատագով ոչ միայն վասն սեպհական
աշխարհին իւրոյ և ժողովրդեան, այլև տիրակալութեամբ վրէժխնդիր ընդդէմ
մեկուցելոց նախնեաց իւրոց, ուրեմն մի լինիցի դժուարին, եթէ ի միջի իւրա-
քանչիւր ազգի ելանել դպնսպիսի այր քաջ, ջատագով, առ ի վրէժխնդիր լինելոյ
ընդդէմ յափշտակողաց սեպհական ժառանգութեան իւրոյ»¹¹:

Ինչպես ասում են՝ կոմենտարիաները այստեղ, կարծես, բոլորովին ավե-
լորդ են, որովհետև խիստ ականառու է մոտեցման այդ ուրիշ ելակետը: Ուշա-
գրավ է և այն, որ մակդիրները շափաղանց նման են Արքայաժողովրդական գոր-
ծածածներին և զաղափարական առումով նույնն են նրա մտադրությու-
նին: Այդտեղ ընդգծվում է այն հիմնական զաղափարը, ըստ որի անհրաժեշտ
է նադիրի նման անհատականությունը, որպեսզի ոչ միայն պահպանի իր եր-
կիրն ու ժողովրդին (Հանուկյր այդ դերը չի վերագրում նադիրին), այլև որպես-
զի վրեժխնդիր լինի իր ազգակիցների կրած տառապանքների համար:

Վերջարանի հեղինակների համար նադիրի կերպարը միջոց է դառնում
իրենց այդ զաղափարի կոնկրետացման համար: Նրանք բացահայտում են այդ,
երբ դիմում են անմիջապես հայ պատմությանը, առանձին դեմքերի ու էտապ-
ների հիշատակությամբ ցանկանում են հատկապես նրա հերոսականությունը
ընդգծել:

«Մի՞թէ ոչ զոյ ի միջի մերում դայսպիսի պատմութիւնք (այսինքն՝ նադիր
շահի պատմությանը նման — Վ. Փ.), — հարց են տալիս նրանք և իսկույն պա-
տասխանում, — քալ լիցի, այլ կայ և գտանի ի բազում տեղիս...»¹²: Նրանք
առաջարկում են այդպիսի պատմությունները լույս աշխարհ բերել, որպեսզի
«Հայկի ժառանգները» իմանան իրենց հայրերի աշխարհի մասին: Դա կծառայի
այն ինքնուրուշականությանը, ազգային ոգու վերելքին, որն իր սուր ծայրով ու-
ղեղված է դեպի դուրս, դեպի արտաքին թշնամին և նվաճողը, իսկ ներսում կտի-
րի իդեալական անգործությունը, այնպիսին, ինչպիսին ընկալում էր տրագիցիոն
պատմագրությունը: Այդ գալիքում բոլորը «ելցեն ի գործս իւրեանց, ոմանք եր-
չանկութիւն և ոմանք առ ի զան բազում, իւրաքանչիւրում զոր ինչ կամի իցէ, և

¹¹ «Պատմագրութիւն...», էջ 180:

¹² Նույն տեղում, էջ 182:

սովոր մնասցէ ընդ մէջ մեր եթէ տեարք, եթէ հովիւք, եթէ հայրք և եթէ որդիք անմեղ ի խղճմտանաց իւրեանց»¹³։

Այստեղ առկա է նույնիսկ ուղղակի բանավեճը Շահամիրյանի դրույթների հետ, որոնք ժխտում էին դասային պայմանավորվածությունները և ամեն ուր քաղաքացուն մի-մի թագավոր էին հռչակում։ Ի դեպ պետք է ասել, որ վերջաբանի հեղինակները իրենց «հավատամքը» արտահայտում են միայն սեփական տողերի մեջ. իսկ ամբողջ երկն ու թարգմանչի սուբյեկտիվ մտեցումը նրանց գաղափարական որևէ կողմն չեն տալիս։ Թեկուպ հիշատակենք նրանց այն հարցադրման առթիվ, ինչ նադիրը սղվանների դեմ կոչել է աղյուսիրական, վրեժխնդրության զգացմունքով, իրականում թարգմանության մեջ բացատրություն է իր հարազատ հորեղբորն սպանելու կապակցությամբ շահ Թահմասլի ղայրույթը մեղմելու ցանկությամբ¹⁴։

Այս կերպ մեկ գրքի սահմաններում իրար բախվում են հակընդդիմ գաղափարներ, որոնք, տառացիորեն միմյանց հաջորդելով, արտացոլում են խմորումներով հարուստ պատմական մի ժամանակաշրջանի հայ հասարակական մտքի ուրույն վիճակը։

Նադիր շահի մասին պատմության թարգմանությունը ունի նաև գեղարվեստական արժանիքներ։ Դիշտ է, այն ժանրային նորություն չէր բերում. նման բնույթի ստեղծագործություններով հարուստ էր հայ գրականությունը, որտեղ հայ իշխանների և թագավորների, ինչպես նաև հոգևոր պետերի մասին կային վարքագրություններ, պատմագրական դիմանկարներ։ Սակայն թարգմանությունը ուղադրավ է նոր աշխարհընկալմամբ, հենց այդպիսի «մեծերի» հասարակեցմամբ, երկրային դարձնելով։ Բացի այդ, արտացոլում է նաև ժամանակի գրական արձակի պարզացման դրույթներ, երբ դեռ այն պարուրված էր պատմության խանձարուրով։ Այդպիսի թարգմանությունը ինչպե՞րով էր պատմական հանգամանքներով, երբ հրապարակախոսական աշխույժ մթնոլորտը մղում էր դեռևս գաղափարական մերկապարանոց հարցադրումների։

Գրական պատկերավորության հասկացությունը նոր էր ամրանում, իսկ այդպիսի հանգամանքներում Նադիրի պատմությունը նախընտրելին էր, որովհետև, նախ՝ հայտնի մի դեմքի մասին էր, հետևաբար համոզականության մասին տարակույս չկար. երկրորդ՝ պատմական ու գրական երևույթները այդտեղ ընդելուզված են հանդես գալիս, ուստի լավագույնս կարող են ծառայել այն գաղափարների իլյուստրացմանը, որոնք արժարժվել են արդեն հրապարակախոսական հայտնի երկերի միջոցով։

Գեղարվեստականության երևույթները ցրված են ամբողջ «Պատմագրություն» մեջ և կազմում են ընդհանրապես պատկերման անբաժանելի տարրը։ Հանուն չոր պատմությունը չէ միայն, որ հետաքրքրում է։ Նա ցունկանում է բացատրել մեծ բռնակալի գործունեության ներքին բովանդակությունը։ Այդ է պատճառը, որ Նադիրը երևում է ոչ միայն խրոնոլոգիական ճշգրտությամբ, այլև արարքների հոգեբանական պատճառաբանվածությամբ, որտեղ դրսևորվում են բնավորության ուրույն գծերը, անհատականության ինքնատիպ հատկանիշները։ Նա ոչ միայն պատմական անձնավորություն է, այլև մի մարդ, որ որոշակի դեմք ունի։

¹³ «Պատմագրություն...», էջ 182—183։

¹⁴ Նույն տեղում, էջ 9—10։

Մանրամասն է խոսվում նրա բնավորության մասին հատկապես «Համբաւ կամ որպիսութիւնք Նազիր շահին» գլխում (էջ 175—178), որտեղ հիմնավորվում է նրա դոժանությունը վախի և անգթության նախապայմաններով:

Պատմական անձնավորության անհատական կյանքի այս տարրերը, որոնք որպէս մեկնաբանման ելակետ հանդես են գալիս նրա պատմական գործունեության առթիւ, ինքնին գեղարվեստականության երանգ են տալիս «Պատմադրությունը...»: Իսկ անշուշտ պայմանավորված էր ոչ միայն հեղինակի նախասիրություններով, այլև նյութի թելադրանքով: Հանուէյր Պարսկաստանում եղաւ նազիրի տիրակալության ծաղկման շրջանում, որը ձեռք էր բերվել երկարատև և անընդհատ պատերազմների շնորհիւ: Այդ պատերազմները, որոնք հյուծում էին երկիրը, ուղեկցվում էին ինքնակալի բմահաճութանը ընդհատումներով: Հանուէյր հանգամանքների բերումով ղեկավարի թարմ հետքերով էր զննում և նրա համար նազիրը ղեռ ոչ այնքան պատմություն էր, որքան մի մարդ, մի երկրի տիրակալ, որ զորդացնում է շրջակայքը, ամենուրեք խոսակցության առարկա է և իր արարքներով առօրյա մեկնարկներով շարունակում էր իր գաղափարները: Նազիրի գործունեությունը ղեռն չի դիտվում մեծ հեռավորություններից, այլ անմիջական տարածություններ է ծնում, որոնք ինքնաբերաբար ուժեղացնում են հոգեբանական պատճառարանվածության անխուսափելիությունը: Իսկ այս իրողությունը օժտել է նազիրին պրական նախատիպի հատկանիշներով, որոնք թափանցել են «Պատմագրություն...» ընդհանուր ոճի մեջ և ուրույն երանգ տվել նրան:

Այս բոլորից հետո առանձնակի սրությամբ առաջանում է այն հարցը, թե ինչպե՞ս նույն երկում կարող էին հանդես գալ տրամագծորեն իրար հակընդդեմ հասարակական-քաղաքական դիրքորոշումներ:

Այս հարցի պատասխանը, որ կարևոր է ինքնին, միաժամանակ լույս է սփռում Շահամիրյանի տպարանի հետագա բախտի վրա, որը կամ անտեսվել է լիովին, կամ թյուր հայտարարությունների տակ կոծկվել: Իսկ այդ տպարանի բախտը իր պատմական իմաստն ունի, չէ՞ որ այդտեղից են լույս աշխարհ եկել հայ նոր աշխարհամբռնման, գաղափարական առաջին ծիծեռնակները:

Մենք այն կարծիքին ենք, որ Պողոս Միրզայանի թարգմանության տպագրությունն սկսողները և ավարտողները տարբեր մարդիկ են, իսկ այդ իր ակնառու զրոշմն է գրել թարգմանական երկի ամբողջ բովանդակության վրա:

Այդ մասին է վկայում և գրքի տպագրության պատմությունը:

Գիրքը, ըստ անվանաթերթի, տպագրվել է 1780 թ., իսկ վերջում գրված հիշատակարանում նշվում է, որ այն լույս է տեսել 1783 թ.: Նրեք տարին փոքրիկ ժամանակաշրջան չէ, մասնավորեւ երբ լույս է տեսել ընդամենը երկու հարյուր օրինակ, իսկ «Յորդորակր» մի տասնամյակ առաջ լույս ընծայվեց յոթ ամսվա ընթացքում միայն:

Այդ ձգձգումը ունեցել է իր ներքին և արտաքին պատճառները:

Ամիթեցի Պողոս Միրզայանը իր թարգմանությամբ գաղափարական համերաշխություն էր արտահայտում շահամիրյանական խմբի հետ: Նա երկրորդական դեր չէր: Սովորել էր նոր Զուլայում, տեղի Ամենափրկիչ վանքի միաբան եղիա վարդապետի մոտ: Ապա պանդխտել էր Կալկաթա, որտեղի անգլիական դատարանում թարգմանչի պաշտոն էր վարում: Մանոթների շրջանում նա ճանաչվել էր որպես «այս երկայնամիտ» և հարգանք էր վայելում: Պաշտոնական գործերից ազատ ժամերին նա թարգմանել է Հանուէյի գիրքը առանց որևէ

նյութական ակնկալության, «սակս միմիայն մխիթարութեան և յօգնութեան ազգին իւրոյ»¹⁵։ Միրզայանը Մագրաս է ուղարկում թարգմանության ձեռագիրը բարեկամների աջակցությամբ լույս ընծայելու համար։

Միրզայանը անշուշտ չէր տարակուսում տպագրության գործի գլուխ գալու մասին։ Եւ 1775 թ. Շահամիրյանի տպարանից տարածվում էր կոչը, թե «...Վերստին աղաչեմք, մի յաւել ևս այսպէս լայսինքն՝ թույլ մի տվեք, որ հին գրչագրերը փշանան, փտեն — Վ. Փ., այլ առ ում և գտանիցի, յորոց և իցէ պատմութեանց գիրք կամ գրքուկ իմն գրչագիր, կամ առաքեցե՛ք առ մեզ ի ձեր յիշատակ մերով ծախիւք և ջանիւք խոստանամք տուել, իսկ թէ ոչ՝ գնհատեալ այս ինչ կամ այն ինչ արժէ, ազդ արասցիք մեզ և մեզ եթէ ձեռնհաս լիցի՝ գնել ի ձէնջ, ի լոյս ածեմք, կամ թէ ոչ տուք...» էջմիածնի նորաբաց տպարանում տպագրելու¹⁶։

Այս գիմումի մեջ ոչ մի գանդատ չկա տպագրական գործի դժվարությունների վերաբերյալ, այլ, ընդհակառակը, կոչ է արվում գրչագրեր ուղարկել տպագրության համար՝ ազգի լուսավորության գործին ծառայեցնելու նպատակով։

Մագրաս է հասնում Միրզայանի թարգմանությունը, և սկսվում է նրա տպագրությունը։ Բայց նույն 1780 թ. Հեյդար Ալին իր ստվարաթիվ բանակով ներխուժում է Կառնատիկ, որտեղ տիրություն էր անում Արևելա-Հնդկական ընկերության Մագրասի խորհուրդը։ Հաջողությունն ու անհաջողությունը փոխնիփոխ հաջորդում են իրար, սակայն պատերազմական գործողությունների թատերաբեմ դարձած հսկայական տերիտորիան հեծում էր ավերածության, կողոպուտի և հարկերի ծանրության տակ։ Մարտերը երբեմն գնում էին Մալրասին մոտիկ, իսկ նահանգի նավահանգստային քաղաքները, տնտեսական կարևոր կենտրոնները ձեռքից ձեռք էին անցնում պատերազմող կողմերի միջև։

Այս պայմաններում տպագրության գործը ձգձգվում է ամբողջ երեք տարով։ Բայց երևան են գալիս էնտուզիաստներ, անկասկած 1782 թ. հետո, որովհետև Հեյդար Ալին արդեն մահացել էր և պատերազմական գործողությունները տեղավորվել էին դեպի արևմուտք։ Այդ էնտուզիաստները սկսված գործը ավարտին են հասցնում և իրենք են հեղինակում «Վերջաբանությունը»։ Նրանք նոր մարդիկ էին, կա և անվանական հիշատակություն — Հակոբ Այուրյան, Հովհաննես որդի Մարգարի, Հովհաննես Մատուրի, Քամալ որդի Մահդեսի և ուրիշների մասին, որոնք նոր են նման գործի ձեռնամուխ լինում. «Երիտասարդքն հայոց սիրով տպագրեցին զայս, և կազմեցին, և սփռեցին ի մէջ յազգին մերոյ, ինքեանք գոլով վաճառականք, և արարին զինքեանս արուեստաւորս տպարանի և հանին ի կատար»¹⁷։

Այդ վաճառականները նյութական սեփականության միջին կարողության են և խիստ ենթակա են հանգամանքների տարաբերումներին. «մեք գոլով ցայգ և ցերեկ ընդ մէջ վտարանդի և կասկածանաց, և զուրկ ի հասարակօրէն կերակրեաց, և մանաւանդ հոգալոյ վասն ընտանեաց և մանկանց և անհմուտ ի յայսպիսի գործոց, պատրաստեցաք զվեր յիշեցեալ պատմագիրքս զայս»¹⁸։

15 «Պատմագրություն...», էջ 180։

16 «Պատմություն մնացորդաց հայոց և վրաց», Մալրաս, 1775, էջ 143—144։

17 «Պատմագրություն...», էջ 182։

18 Նույն տեղում, էջ 181։

Այսպիսով, «Վերջաբանությունը» դրել են մարդիկ, որ անհմուտ են եղել այդպիսի տույազրական գործ կատարելու համար և այդ արձանագրել են քաղաքական ու հասարակական իրենց բմբոնումների հետ միասին:

«Վերջաբանության» այլ հեղինակությունը հաստատվում է նաև նրանով, որ այդտեղ կոչ է արվում ուրիշների, հատկապես կրոնավորների («որ կայք ի լանդորրութեան ի միջի վանօրէից և կրօնաւորացդ»), որպեսզի զբաղվեն հայ հերոսական անցյալը սկստկերող երկերի հրատարակությամբ, երբ դեռևս 1775 թ. հրատարակիչներն իրենք էին հանձնառու լինում:

Մի ուրիշ իրողություն ևս խոսում է «Վերջաբանության» այլ դրչի պատկանելու մասին: Դա Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի նամակն է՝ 1789 թ. հունվարի 21-ին գրված: «Շամիր աղայից երկու նամակ եմ ստացել, — հայտնում է այդ հայտնի գործիչը Պետերբուրգում գտնվող իր ծանոթին. — նա վասն արքային (վրաց Հերակլ երկրորդ թագավորի — Վ. Փ.) երկու հատ առաքեալ է գիրք «Որոգայթ փառաց» ի վերայ Զուղայու, Շամիր աղայն նոյնպէս նադր շահի պատմութիւնն տպեալ է և ի Թիֆլիս առաքեալ, ապա մեք շեմք տեսեալ»¹⁹: Այնուամենայնիվ, Շահամիրյանի ուղարկած գրքերի մեջ նադիր շահի մասին «Պատմագրությունը...» չկա, այն այլ ճանապարհով է հասել Թիֆլիս, իսկ ուղարկողները կարող էին լինել ուրիշ մարդիկ, մեծ հավանականությամբ «Վերջաբանության» հեղինակները:

Նրանք օգտագործել են Շահամիրյանի տպարանի հնարավորությունները («և գործիքն տպարանի եղև ձրի ի տպարանէն Յակոբա Շահամիրեանց»), իսկ հրատարակիչը (եթե Շահամիրյանը լիներ) չէր ասի, թե ինքը իր տպարանի գործիքները ձրի է գործածել: Հետևաբար ասողները «Վերջաբանությունը» գրողներն են, որոնք բոլորովին այլ հայեցակետից, քան կա թարգմանության մեջ, յույս աշխարհ են հանում թարգմանական մի երկ:

Սա է «Պատմագրության...» մեջ առկա հակասության հիմքը, որ որոշ ելակետներ է տալիս նաև տպարանի բախտի վերաբերյալ հետևություններ անելու: Մենք կարծում ենք, որ Շահամիրյանը, պահպանել տալով տպարանի անվանումը, այն տրամադրում էր ուրիշների, հատկապես «Պատմագրությունից...» սկսած, և դա այն աստիճան. որ հետագայում լիովին զրկվեց դրանից: 1789 թ. դեռ առաջ նա արդեն տպարան չուներ, որովհետև նույն տարում Հարություն Շմավոնյանը հրատարակչական լայն գործունեություն սկսեց իր ստեղծած տառերով ու տպարանում, բացի այդ, նույնիսկ Շահամիրյանը, հարկադրյալ, ինչպես Ս. Երիցյանն է հաղորդում իր հայտնի ուսումնասիրության մեջ, Հովսեփ Արղությանին ուղարկում է իր տոհմի պատմագրությունը և «խնդրում է, որ ուղղվի և տպվի անպատճառ Հաշտարխանու տպարանում...»²⁰:

Տպարանատեր Շահամիրյանը իր տոհմի պատմագրությունը տպագրելիս, անշուշտ, կարիք չէր ունենա հեռավոր մեկ ուրիշի խնդրելու, պարզապես ինքը կաներ այդ, ուստի անհիմն է, մեր կարծիքով, հետազոտողի այն հայտարարությունը, թե Շահամիրյանը «նույն միջոցներին ինքը ևս շարունակում է գործել

19 Ս. Երիցյան, Հակոբ Շահամիրյանցի մատենագրական գործունեությունը Հնդկաստանում, 1881, էջ 24:

20 Նույն տեղում:

իր տպարանում Մադրաս»²¹։ Փաստորեն 1784 թ. հետո ոչ մի գիրք լույս չտեսավ Շահամիրյանի տպարանից և «Տեառակ, որ կոչի նշտակ»-ը եղավ նրա կտրուցի երգը, որտեղ տեղական ինքնավարության հետ կապված հարցեր էին արժարժվում և որը լույս էր տեսնում «ծախիւք Մադրասիս հայոց»²²։

Այս կերպ անգլերենից թարգմանված առաջին երկը բաղմակողմանորեն հետաքրքիր է։ Այդտեղ լայն արտացոլում են գտել ժամանակի հայ իրականության հետ կապված շատ երևույթներ, որոնք միաժամանակ խոսում են հայ-անգլիական գրական առնչությունների մի էական կողմի մասին։ Այդ առնչությունները գնացել են ստեղծագործական ուղիով։

В. А. ПАРТАМЯН

ПЕРВЫЙ АРМЯНСКИЙ ПЕРЕВОД АНГЛИЙСКОГО ПРОИЗВЕДЕНИЯ

Р е з ю м е

В 1783 году, в Мадрасе, впервые Погосом Мирзаяном был осуществлен перевод на армянский язык произведения видного английского общественного деятеля Джонаса Гануэя — «История жизни и деятельности персидского шаха Надира». Книга представляет большой интерес для изучения истории различных течений национально-освободительного движения армянского народа.

В статье впервые дается обстоятельный разбор как самого произведения английского автора, так и значения перевода для армянской действительности того времени. Автор статьи выявляет мировоззрение переводчика П. Мирзаяна, который близко стоял к Ш. Шаамиряну, М. Баграмяну и другим видным деятелям национально-освободительного движения.

В послесловии к переводу, авторами которого, как убедительно показано в статье, были другие лица, рассматривается различная трактовка деятельности Надир-шаха.

Перевод П. Мирзаяна оценивается также с точки зрения развития армянской прозы того периода наряду с произведениями Ш. Шаамиряна, М. Баграмяна.

В статье на основании перевода устанавливается дальнейшая судьба известной типографии Ш. Шаамиряна в Мадрасе.

²¹ *Նույն տեղում*։

²² «Տեառակ, որ կոչի նշտակ», *Մադրաս, 1783 (1784)*, էջ 76։